ԴԱՍ 18

Էջ 143

Այն թերթիկները, որոնցում կա մի քանի նշում, համարվում են անվավեր:

Եթե քվեարկությունը փակ է, ոչ ոք չպետք է նայի, թե ինչպես է քվեարկում մյուսը: Երբեմն նման դեպքերում առանձին խցիկներ կամ սենյակներ են տրամադրվում, որ-տեղ քվեարկողները լինում են միայնակ: Այնտեղ նրանց նկարահանել կամ գաղտնա-հսկել չի կարելի: Եթե ինչ-որ մեկը դժվարություն ունի, օրինակ՝ կարդալու կամ նշում անելու, նրա հետ կարող է լինել իրեն օգնող մեկը:

Արդեն նշում կատարած թերթիկները գցվում են հատուկ նախատեսված արկղիկի՝ քվեատուփի մեջ, որը պետք է լինի փակ, ցանկալի է՝ կնքված: Դասարանում կատար-վելիք քվեարկության համար Դուք արկղիկը կարող եք «կնքել» պլաստիլինով կամ սոսնձած թղթով: Քվեատուփը բացվում է քվեարկության արդյունքները հաշվելիս՝ դրա համար ընտրված հանձնաժողովի կողմից: Ապա հերթով նայվում են քվեաթեր-թիկները, որպեսզի անվավեր չլինեն ու գրանցվում են արդյունքները ստորև ներ-կայացված աղյուսակի նման աղյուսակում.

Թերթիկ	Ձայնը տրված է			Թերթիկն անվավեր է
	Խ. Գ.-ին	Հ. Ժ. -ին	Կ. Հ.-ին	
1.				
2.				
3.				
ԸՆԴԱՄԵՆԸ				